Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՐԱՀԱՆԳ

Գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատով աղտոտումից ջրերի պաշտպանության մասին

(91/676/ԵՏՀ)

(ՊՏ L 375, 31.12.1991թ., էջ 1)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	**էջ**	**ամսաթիվ**
►M1	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով	L 284	1	31.10.2003թ.
▼M2	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգով	L 311	1	21.11.2008թ.

▼B

ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՐԱՀԱՆԳ Գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատով աղտոտումից ջրերի պաշտպանության մասին

(91/676/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130ժթ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ անդամ պետությունների որոշ տարածքներում նիտրատի պարունակությունը ջրում ավելանում և գերազանցում է Խորհրդի՝ «Անդամ պետություններում խմելու ջրի արդյունահանման նպատակով մակերևութային ջրերի պահանջվող որակի մասին» 1975 թվականի հունիսի 16–ի 75/440/ԵՏՀ հրահանգում(4) սահմանված ստանդարտները (փոփոխված՝ 79/869/ԵՏՀ(5) հրահանգով ու «Մարդու սպառման նպատակով ջրի որակի մասին» Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի 80/778/ԵՏՀ հրահանգով (6) և 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով),

քանի որ շրջակա միջավայրի մասին Եվրոպական տնտեսական համայնքների գործողությունների չորրորդ ծրագրում (7) նշվում է, որ Հանձնաժողովը մտադիր է հանդես գալ պարարտանյութերի չափից շատ օգտագործման և անասունների թափոնների տարածման կամ արտանետման հետևանքով ջրի աղտոտվածության վերահսկման ու նվազեցման մասին հրահանգ կազմելու առաջարկությամբ,

քանի որ Հանձնաժողովի «Գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականության հեռանկարները» կանաչ փաստաթղթում սահմանված գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականության բարեփոխման մեջ նշվում է, որ, չնայած ազոտ պարունակող պարարտանյութերի և գոմաղբի կիրառությունն անհրաժեշտ է Համայնքի

գյուղատնտեսության համար, այնուամենայնիվ, պարարտանյութերի չափից շատ օգտագործումը շրջակա միջավայրի համար վտանգ է ներկայացնում, և որ անհրաժեշտ է ձեռնարկել ընդհանուր գործողություններ՝ վերահսկելու համար այն խնդիրը, որն առաջանում է անասունների ինտենսիվ արտադրությունից և որ գյուղատնտեսական քաղաքականության մեջ առավել շատ ուշադրություն պետք է դարձվի շրջակա միջավայրի քաղաքականությանը,

քանի որ «Հյուսիսային ծովի և Համայնքի այլ ջրերի պաշտպանության մասին» 1988 թվականի հունիսի 28–ի Խորհրդի որոշմամբ (8) Հանձնաժողովին կոչ արվեց առաջարկներ ներկայացնել՝ Համայնքի մակարդակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար,

քանի որ ցրված աղբյուրներից աղտոտման հիմնական պատճառը, որն ազդում է Համայնքի ջրերի վրա, գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատի տարածումն է,

քանի որ մարդու առողջությունն ու կենսաբանական ռեսուրսները, ինչպես նաև ջրային էկոհամակարգերը պաշտպանելու և ջրօգտագործման մյուս օրինական դեպքերը երաշխավորելու և նման աղտոտման հետագա դեպքերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է նվազեցնել ջրի աղտոտումը, որի պատճառ է լինում կամ որն առաջանում է գյուղատնտեսական աղբյուրների նիտրատից. և քանի որ ազոտի բոլոր միացությունների պահեստավորման ու հողի վրա կիրառության, ինչպես նաև հողի կառավարման որոշ գործելակերպի առումով հարկավոր է միջոցներ ձեռնարկել,

քանի որ նիտրատով ջրի աղտոտումը մեկ անդամ պետությունում կարող է ազդեցություն ունենալ մյուս անդամ պետությունների ջրերի վրա. և քանի որ անհրաժեշտ է 130ժը հոդվածին համապատասխան, Համայնքի մակարդակով, գործողություններ իրականացնել,

քանի որ գյուղատնտեսական լավագույն գործելակերպը խրախուսելու միջոցով անդամ պետությունները հետագայում կարող են աղտոտումից բոլոր ջրերի պաշտպանության ընդհանուր մակարդակ սահմանել,

քանի որ որոշ գոտիներ, ուր հոսում են ազոտի միացությունների աղտոտման ենթարկվող ջրերը, պահանջում են հատուկ պաշտպանություն,

քանի որ անդամ պետությունները պետք է սահմանեն խոցելի գոտիները և պետք է գործողությունների ծրագրեր կազմեն ու իրականացնեն՝ խոցելի գոտիներում ազոտի միացություններից ջրի աղտոտումը նվազեցնելու նպատակով,

քանի որ գործողությունների նման ծրագրերը պետք է ներառեն այնպիսի միջոցներ, որոնց նպատակը ազոտ պարունակող բոլոր պարարտանյութերի կիրառությունը հողում սահմանափակելն է, մասնավորապես՝ հատուկ շեմեր սահմանելով անասունների գոմաղբի կիրառության համար,

քանի որ անհրաժեշտ է դիտանցել ջրերը և ազոտի միացությունների չափումների նկատմամբ՝ ապահովելու համար, որ կիրառվող միջոցները արդյունավետ լինեն,

քանի որ ընդունված է, որ որոշ անդամ պետություններում հիդրոգեոլոգիան այնպիսին է, որ երկար տարիներ կտևի՝ նախքան պաշտպանիչ միջոցները՝ ջրի որակի հետ կապված, կտան դրական արդյունքներ,

քանի որ սույն Հրահանգի իրականացման և այդ հրահանգը գիտական ու տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու հետ կապված հարցերում Հանձնաժողովին օժանդակելու համար անհրաժեշտ է կոմիտե ստեղծել,

քանի որ անդամ պետությունները պետք է մշակեն և սույն Հրահանգի իրականացման մասին հաշվետվություններ ներկայացնեն Հանձնաժողով,

քանի որ Հանձնաժողովը անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի իրականացման մասին պետք է կանոնավորապես հաշվետվություն ներկայացնի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգի նպատակն է՝

- նվազեցնելու գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատների պատճառով կամ դրանց կողմից առաջացած ջրի աղտոտումը և
- հետագայում կանխարգելելու նման աղտոտումը:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) «ստորգետնյա ջրեր» նշանակում է բոլոր այն ջրերը, որոնք հողի մակերևույթից ներքև են գտնվում՝ հագեցման գոտում, և անմիջական շփման մեջ են հողի կամ ենթահողի հետ.

բ) «քաղցրահամ ջուր» նշանակում է աղի ցածր խտայնություն ունեցող՝ բնական կերպով առաջացող ջուր, որը հաճախ հարմար է՝ ջրառի և խմելու ջուր ստանալու նպատակով մաքրման համար.

գ) «ազոտի միացություն» նշանակում է ազոտ պարունակող ցանկացած նյութ՝ բացառությամբ գազային մոլեկուլյար ազոտի.

դ) «անասուններ» նշանակում է օգտագործման կամ շահույթ ստանալու նպատակով պահվող բոլոր կենդանիները,

ե) «պարարտանյութ» նշանակում է այնպիսի նյութ, որը ազոտի միացություն կամ ազոտի միացություններ է պարունակում, որն օգտագործվում է հողում՝ բուսականության աճը խթանելու նպատակով. դրա մեջ կարող են մտնել անասունների գոմաղբը, ձկնորսական ֆերմաների մնացորդները և կոյուղու կեղտը.

զ) «քիմիական պարարտանյութ» նշանակում է այնպիսի պարարտանյութ, որն արտադրվել է արդյունաբերական գործընթացի միջոցով.

է) «անասունների գոմաղբ» նշանակում է անասուններից ստացված թափոնային արտադրանքը կամ անասուններից ստացված թափոնների և կղկղանքի խառնուրդը, այդ թվում՝ մշակված վիճակում.

ը) «հողի մշակում/օգտագործում» նշանակում է նյութերի ավելացում հողում՝ հողի մակերևույթին տարածելու, հողի մեջ սրսկելու, հողի մակերևույթից ներքև տեղադրելու կամ հողի մակերևութային շերտերի հետ խառնելու միջոցով.

թ) «էվտրոֆիկացիա» 1 նշանակում է ջրի հարստացում՝ ազոտի միացությունների միջոցով, որի հետևանքով ջրիմուռների և բուսական աշխարհի առավել բարձր ձևերի

արագացված աճը ջրում առկա օրգանիզմների հավասարակշռության և ջրի որակի անցանկալի խախտում է առաջացնում.

ժ) «աղտոտում» նշանակում է գյուղատնտեսական աղբյուրներից ազոտի միացությունների ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտանետում ջրային միջավայր, որի հետևանքներն այնպիսին են, որ կարող են վտանգ ներկայացնել մարդու առողջության համար, վնասել կենսաբանական ռեսուրսները և ջրային էկոհամակարգերը, վնաս հասցնել շրջապատի բարեկարգ վիճակին կամ բացասական ազդեցություն ունենալ ջրօգտագործման այլ օրինական եղանակների վրա.

ժա) «խոցելի գոտի» նշանակում է 3(2) հոդվածի համաձայն նախատեսված հողի գոտի:

Հոդված 3

1. Աղտոտման ենթարկված ջրերը և այն ջրերը, որոնք կարող էին ենթարկվել աղտոտման, եթե 5-րդ հոդվածի համաձայն, գործողություններ չձեռնարկվեին, սահմանվում են անդամ պետությունների կողմից՝ I հավելվածում սահմանված չափանիշների համաձայն:

2. Անդամ պետությունները սույն Հրահանգի ծանուցումից հետո երկու տարվա ընթացքում որպես խոցելի գոտի են սահմանում իրենց տարածքում տեղակայված բոլոր հայտնի հողատարածքները, որոնց ողողում են 1-ին պարբերության մեջ սահմանված ջրերը և որոնք նպաստում են դրանց աղտոտմանը: Նրանք Հանձնաժողովին վեց ամսվա ընթացքում տեղեկացնում են այս նախնական սահմանման մասին:

3. Եթե անդամ պետությունների կողմից 1-ին պարբերության համաձայն սահմանված ջրերն աղտոտվում են մեկ այլ անդամ պետության ջրերից, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն լցվում են դրանց մեջ, ապա այն անդամ պետությունները, որոնց ջրերն աղտոտվել են, համապատասխան փաստերի մասին տեղեկացնում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին:

Համապատասխան անդամ պետությունները, հարկ եղած դեպքում Հանձնաժողովի հետ համատեղ, կազմակերպում են համապատասխան աղբյուրները հայտնաբերելու համար

անհրաժեշտ աշխատանքները և աղտոտման ենթարկված ջրերը պաշտպանելուն ուղղված միջոցները՝ սույն Հրահանգի հետ համապատասխանություն ապահովելու համար:

4. Անդամ պետությունները վերանայում և, անհրաժեշտության դեպքում, փոփոխում կամ ավելացնում են խոցելի գոտիների սահմանումները՝ ըստ պատշաճի, և առնվազն չորս տարին մեկ անգամ հաշվի են առնում այդ փոփոխությունները և այն գործոնները, որոնք վերջին սահմանման կատարման պահին հնարավոր չէր կանխատեսել: Նրանք Հանձնաժողովին վեց ամսվա ընթացքում տեղեկացնում են սահմանումների մեջ կատարված փոփոխությունների և ավելացումների մասին:

5. Անդամ պետություններն ազատվում են հատուկ խոցելի գոտիներ սահմանելու պարտավորությունից, եթե նրանք իրենց ազգային տարածքում կազմում և կիրառում են 5-րդ հոդվածում նշված գործողությունների ծրագրերը՝ սույն Հրահանգի համաձայն:

Հոդված 4

1. Ջրերի աղտոտման դեմ ընդհանուր մակարդակի պաշտպանություն ապահովելու համար անդամ պետությունները սույն Հրահանգի ծանուցմանը հետևող երկու տարվա ընթացքում՝

ա) կազմում են գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոն կամ կանոններ, որոնք ֆերմերների կողմից պետք է իրականացվեն կամավոր հիմունքով: Տվյալ կանոնները պետք է ներառեն դրույթներ, որոնք ընդգրկում են առնվազն II Ա հավելվածում նշված կետերը.

բ) անհրաժեշտության դեպքում կազմում են ծրագիր, որը դրույթ է ներառում գյուղատնտեսների վերապատրաստման և տեղեկատվության մասին՝ խթանելով գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոնը (կանոնները):

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոնների մանրամասները և Հանձնաժողովն այդ կանոնների վերաբերյալ տեղեկատվություն է ներառում 11-րդ հոդվածում նշված հաշվետվության մեջ: Ստացված տեղեկատվության համատեքստում Հանձնաժողովը

կարող է հանդես գալ համապատասխան առաջարկներով՝ ուղղված Խորհրդին, եթե անհրաժեշտ է համարում:

Հոդված 5

1. 3(2) հոդվածում նշված՝ նախնական սահմանմանը հետևող երկու տարվա ընթացքում կամ լրացուցիչ սահմանմանը հետևող՝ մեկ տարվա ընթացքում անդամ պետությունները սահմանված խոցելի գոտիների վերաբերյալ կազմում են գործողությունների ծրագրեր՝ 1-ին հոդվածում սահմանված նպատակներն իրականացնելու նպատակով:

2. Գործողությունների ծրագիրը կարող է վերաբերել անդամ պետության տարածքի բոլոր խոցելի գոտիներին կամ, եթե անդամ պետությունը հարկ է համարում, ապա տարբեր ծրագրեր կարող են կազմվել տարբեր խոցելի գոտիների կամ դրանց մասերի համար:

3. Գործողությունների ծրագրերի մեջ հաշվի են առնվում՝

ա) առկա գիտական և տեխնիկական տվյալները, մասնավորապես հղում կատարելով ազոտի վերաբերյալ ներդրումներին, որոնք սկիզբ են առնում գյուղատնտեսական և այլ աղբյուրներից.

բ) համապատասխան անդամ պետության համապատասխան տարածաշրջաններում շրջակա միջավայրի վիճակը:

4. Գործողությունների ծրագրերը իրականացվում են դրանց կազմմանը հետևող չորս տարվա ընթացքում և բաղկացած են հետևյալ պարտադիր միջոցներից՝

ա) III հավելվածում նշված միջոցները.

բ) այն միջոցները, որոնք անդամ պետությունները սահմանել են 4-րդ հոդվածի համաձայն սահմանված գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոնում(կանոններում)՝ բացառությամբ այն միջոցների, որոնք փոխարինվել են III հավելվածում նշված միջոցներով:

5. Ավելին, անդամ պետությունները հարկ եղած դեպքում գործողությունների ծրագրերի համատեքստում ձեռնարկում են լրացուցիչ միջոցներ կամ ինտենսիվ գործողություններ, եթե ծրագրի սկզբում կամ գործողությունների ծրագիրն իրականացնելու ընթացքում ձեռք բերված փորձառության համատեքստում ակնհայտ է դառնում, որ 4-րդ պարբերույթան մեջ նշված միջոցները բավարար չեն լինի՝ 1-ին հոդվածում սահմանված նպատակներին հասնելու համար: Այդ միջոցները կամ գործողություններն ընտրելիս՝ անդամ պետությունները հաշվի են առնում դրանց արդյունավետությունը և արժեքը՝ համեմատելով այլ հնարավոր կանխարգելիչ միջոցների հետ:

6. Անդամ պետությունները կազմում և իրականացնում են պատշաճ դիտանցման ծրագրեր՝ գնահատելու համար գործողությունների ծրագրերի արդյունավետությունը, որոնք սույն հոդվածի համաձայն են սահմանվել:

Իրենց տարածքում 5-րդ հոդվածը կիրառող անդամ պետությունները դիտանցում են ջրերում նիտրատի պարունակությունը (մակերևութային և ստորգետնյա ջրերում) համապատասխան դիտակետերում, որը հնարավորություն է ընձեռում որոշելու նիտրատի պարունակությունը գյուղատնտեսական աղբյուրներից արտահոսող ջրերում:

7. Անդամ պետությունները վերանայում և, հարկ եղած դեպքում, առնվազն հինգ տարին մեկ անգամ փոփոխում են գործողությունների ծրագրերը՝ ներառյալ 5-րդ պարբերության համաձայն ձեռնարկված լրացուցիչ միջոցները: Նրանք տեղեկացնում են Հանձնաժողովին գործողությունների ծրագրերում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 6

1. Խոցելի գոտիները սահմանելու և սահմանումները փոփոխելու նպատակով անդամ պետությունները՝

ա) հրահանգի ծանուցմանը հետևող երկու տարվա ընթացքում դիտանցում են քաղցրահամ ջրերում նիտրատի խտությունը մեկ տարվա կտրվածքով՝

i) մակերևութային ջրերի նմուշառման կետերում, որոնք սահմանված են 75/440/ԵՏՀ հրահանգի 5(4) հոդվածում և (կամ) նմուշառման այլ կետերում, որոնք ներկայացնում են անդամ պետությունների մակերևութային ջրերի ընդհանուր պատկերը: Նմուշառումը կատարվում է առնվազն ամիսը մեկ անգամ, իսկ հեղեղների ժամանակ՝ ավելի հաճախ:

ii) նմուշառման այն կետերում, որոնք ներկայացնում են անդամ պետությունների ստորգետնյա ջրաշերտերի ընդհանուր պատկերը՝ հստակ պարբերականությամբ և հաշվի առնելով 80/788/ԵՏՀ հրահանգի դրույթները.

բ) կրկնում են (ա) կետում սահմանված դիտանցման ծրագիրը առնվազն չորս տարին մեկ անգամ, բացառությամբ այն նմուշառման կենտրոնների, որտեղ ազոտի խտությունը բոլոր նախկին նմուշներում 25մգ/լ–ից ցածր է եղել և նիտրատի պարունակությունը մեծացնելու հավանական գործոններ ի հայտ չեն եկել, որի դեպքում դիտանցման ծրագիրը պետք է միայն յուրաքանչյուր ութ տարին մեկ անգամ կրկնվի.

գ) յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ վերանում են քաղցրահամ վերգետնյա ջրերի, էստուարային և ծովային ջրերի էվտրոֆիկ վիճակը:

2. Կիրառվում են IV հավելվածում սահմանված՝ չափման էտալոնային մեթոդները:

▼M2

Հոդված 7

Հանձնաժողովը կարող է 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված դիտանցման համար ուղեցույցներ սահմանել՝ 9(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

Հոդված 8

Հանձնաժողովը կարող է սույն Հրահանգի հավելվածները հարմարեցնել գիտական և տեխնիկական առաջընթացին:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է 9(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան ընդունվեն:

▼M1

Հոդված 9

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ (9) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

▼M2

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 10

1. Սույն Հրահանգի ծանուցումից հետո չորս տարվա ընթացքում և հաջորդ յուրաքանչյուր չորս տարի ժամկետում անդամ պետությունները Հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում, որի մեջ ներառվում է V հավելվածում սահմանված տեղեկատվությունը:

2. Սույն հոդվածի համաձայն՝ հաշվետվությունը ներկայացվում է Հանձնաժողով՝ դրան վերաբերող ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Հոդված 11

10-րդ հոդվածի համաձայն ստացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը հրապարակում է հաշվետվությունների ամփոփագիր՝ անդամ պետություններից հաշվետվություններն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում և ուղարկում է այն Եվրոպական պառլամենտ ու Խորհուրդ: Սույն Հրահանգի իրականացման համատեքստում և, մասնավորապես, հաշվի առնելով III հավելվածի դրույթները, Հանձնաժողովը մինչև 1998 թվականի հունվարի 1-ը Խորհուրդ հաշվետվություն է

ուղարկում՝ հարկ եղած դեպքում առաջարկներ ներկայացնելով սույն Հրահանգի փոփոխության մասին:

Հոդված 12

1. Անդամ պետությունները սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում Հրահանգի մասին ծանուցելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 13

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

3 (1) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՋՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ա. 3 (1) հոդվածում նշված ջրերը սահմանվում են, մասնավորապես, հետևյալ չափանիշների հիման վրա՝

1. արդյոք մակերևութային քաղցրահամ ջրերը, մասնավորապես այն ջրերը, որոնք օգտագործվում են կամ նախատեսված են խմելու ջրի ջրառի նպատակով, պարունակում կամ կարող են պարունակել 75/440/ԵՏՀ հրահանգի համաձայն սահմանված նիտրատի խտությունից ավելի խտություն, եթե 5-րդ հոդվածով սահմանված գործողությունները չձեռնարկվեն.

2. արդյոք ստորգետնյա ջրերը պարունակում են 50 մգ/լ նիտրատից ավելին կամ կարող են պարունակել 50 մգ/լ նիտրատից ավելին, եթե 5-րդ հոդվածում սահմանված գործողությունները չձեռնարկվեն.

3. արդյոք բնական քաղցրահամ լճերը, քաղցրահամ ջրերի այլ ամբարներ, էստուարներ, ափամերձ ջրեր և ծովային ջրեր էվտրոֆիկ են կամ մոտ ապագայում կարող են դառնալ էվտրոֆիկ, եթե 5-րդ հոդվածի համաձայն սահմանված գործողությունները չձեռնարկվեն:

Բ. Այդ չափանիշները կիրառելիս՝ անդամ պետությունները նաև հաշվի են առնում՝

1. ջրերի և հողի ֆիզիկական և էկոլոգիական բնույթը.

2. շրջակա միջավայրում (ջուր և հող) ազոտի միացությունների դրսևորումների մասին ընթացիկ գիտելիքները.

3. 5-րդ հոդվածի համաձայն ձեռնարկվող գործողությունների ազդեցության մասին ընթացիկ գիտելիքները:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆ (ԿԱՆՈՆՆԵՐ)

Ա. Գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոնը կամ կանոնները, որի նպատակը նիտրատով աղտոտումը նվազեցնելը և Համայնքի տարբեր տարածաշրջանների պայմանները հաշվի առնելն է, պետք է պարունակեն որոշ դրույթներ, որոնք ընդգրկում են հետևյալ կետերը (եթե դրանք համապատասխան են)՝

1. ժամանակաշրջանները, երբ հողի մշակումը պարարտանյութերով տեղին չէ.
2. բլրածածկ հողի մշակումը պարարտանյութերով.
3. ջրառատ, հեղեղված, սառցակալած կամ ձյունով ծածկված հողի մշակումը պարարտանյութերով.
4. ջրահոսքի մոտ հողի մշակման պայմանները՝ պարարտանյութերով.
5. անասունների գոմաղբի համար պահեստային տարայի տարողունակությունը և կառուցվածքը՝ ներառյալ այնպիսի միջոցներ, որոնք կանխարգելում են ջրի աղտոտումը՝ ստորգետնյա ջրերի մեջ թափոնների արտանետման ու արտահոսքի հետևանքով և մակերևութային ջրերում՝ անասունների գոմաղբ ու բուսական պահեստավորված նյութերի թափոններ (օրինակ՝ սիլոս) պարունակող հեղուկների հոսքի հետևանքով.
6. հողի մշակման ընթացակարգեր՝ ներառյալ թե քիմիական պարարտանյութերի և թե խոշոր եղջերավոր անասունների գոմաղբի տարածման արագությունը և համասեռությունը, որոնք սնուցիչ նյութերի կորուստը պահում են թույլատրելի մակարդակում:

Բ. Անդամ պետությունները կարող են իրենց գյուղատնտեսական լավագույն գործելակերպի կանոնում (կանոններում) ներառել հետևյալ կետերը՝

7. հողօգտագործման կառավարումը՝ ներառյալ մշակաբույսերի ռոտացիայի համակարգերը և հողի տրամադրումը մշտադալար մշակաբույսերին՝ ամենամյա

հեռաշարացան կուլտուրաների հարաբերությամբ.

8. բուսականության նվազագույն քանակության պահպանում որոշ ժամանակաշրջաններում (անձրևային), որը ազոտը հանում է հողից՝ հակառակ դեպքում նիտրատով ջրի աղտոտում առաջացնելով.
9. պարարտանյութերով հարստացման ծրագրերի կազմում՝ ըստ տնտեսությունների և պարարտանյութերի օգտագործման մասին գրանցումների կատարում.
10. թափոններից աղտոտման կանխարգելում և ոռոգման համակարգերում մշակաբույսերի արմատներից որոշակի հեռավորության վրա ջրի վայրընթաց հոսքի կազմակերպում:

ՀԱՎԵԼՎԱԾ III

5 (4) (ա) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Այդ միջոցները ներառում են կանոններ, որոնք վերաբերում են՝

   1. այն ժամանակաշրջաններին, երբ հողի մշակումը որոշ տեսակի պարարտանյութերով արգելվում է.

   2. անասունների գոմաղբ տեղափոխող պահեստային տարաների տարողունակությունը. այդ տարողունակությունը պետք է գերազանցի պահեստավորման պահանջվող մեծությունը ամենաերկար ժամանակահատվածում, որի ընթացքում հողի մշակումը խոցելի գոտիներում արգելված է, բացառությամբ, եթե հնարավոր է ապացուցել իրավասու մարմնին, որ իրական պահեստավորման քանակությունից շատ գոմաղբ թափելը շրջակա միջավայրին վնաս չի հասցնի.

   3. պարարտանյութերով հողի մշակման սահմանափակմանը, որը համապատասխանում է գյուղատնտեսական լավագույն գործելակերպի պահանջներին և հաշվի է առնում խոցելի գոտիների հատկանիշները, մասնավորապես՝

      ա) հողի պայմանները, հողի տեսակը և թեքվածությունը.

      բ) կլիմայական պայմանները, անձրևները և ոռոգումը.

      գ) հողօգտագործումը և գյուղատնտեսական գործելակերպը՝ ներառյալ մշակաբույսերի ռոտացիոն համակարգերը

      և հավասարակշռություն ապահովեն՝

      i) մշակաբույսերում ազոտի պարունակության կանխատեսելի պահանջների.

      և

      ii) հողից և պարարտանյութերից մշակաբույսերին անցնող ազոտի չափերի միջև, որը համապատասխանում է՝

– հողում առկա ազոտի քանակությանն այն պահին, երբ մշակաբույսն սկսում է այն օգտագործել էական չափերով (առավելագույն ծավալներով՝ ձմեռվա վերջում).

– ազոտի մատակարարում հողում՝ օրգանական ազոտի պաշարների զուտ հանքայնացման միջոցով.

– ազոտի միացությունների հավելումներ՝ անասունների գոմաղբից.

– ազոտի միացությունների հավելումներ՝ քիմիական և այլ պարարտանյութերից:

2. Այդ միջոցներն ապահովում են, որ յուրաքանչյուր գյուղի տնտեսության կամ անասունների ֆերմայի դեպքում, յուրաքանչյուր տարի հողին արհեստական ինչպես նաև բնական ճանապարհով խառնվող անասունների գոմաղբի քանակությունը չգերազանցի մեկ հեկտարի համար նախատեսված քանակությունը:

Մեկ հեկտարին ընկնող քանակությունը 170 կգ N է: Այնուամենայնիվ՝

ա) առաջին չորս տարվա գործողությունների ծրագրի դեպքում անդամ պետությունները կարող են թույլատրել 210 կգ N պարունակությամբ գոմաղբ.

բ) առաջին չորս տարվա գործողությունների ծրագրի ժամանակ և դրանից հետո անդամ պետությունները վերոնշյալի համար կարող են սահմանել այլ քանակություն: Այդ քանակությունները պետք է սահմանվեն այնպես, որ դրանք չսահմանափակեն 1-ին հոդվածում սահմանված նպատակների իրականացումը և պետք է հիմնավորվեն օբյեկտիվ չափանիշների հիման վրա, օրինակ՝

– աճման երկար սեզոններ.

– ազոտի բարձր կլանման մշակաբույսեր.

– խոցելի գոտում առատ տեղումներ.

– ազոտներից մաքրման բացառիկ հատկություն ունեցող հող:

Եթե անդամ պետությունը արտոնում է այլ քանակություն՝ երկրորդ ենթապարբերության բ) կետի համաձայն, ապա այն տեղեկացնում է

Հանձնաժողովին: Վերջինս ուսումնասիրում է հիմնավորումը՝ 9(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

3. Անդամ պետությունները ըստ կենդանիների գլխաքանակի կարող են հաշվարկել 2-րդ պարբերության մեջ նշված գումարները:

4. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այն մեթոդի մասին, որի համաձայն նրանք կիրառում են 23-րդ պարբերության դրույթները: Ստացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը կարող է հանդես գալ համապատասխան առաջարկներով՝ ուղղված Խորհրդին 11-րդ հոդվածի համաձայն, եթե անհրաժեշտ է գտնում:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՉԱՓՄԱՆ ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Քիմիական պարարտանյութեր

Ազոտի միացությունները չափվում են՝ օգտագործելով «Պարարտանյութերի նմուշառման և վերլուծության մեթոդներին վերաբերող՝ անդամ պետությունների իրավական ակտերի մոտարկման մասին» Հանձնաժողովի 1977 թվականի հունիսի 22-ի 77/535/ԵՏՀ հրահանգում (11) (փոփոխված՝ 89/519/ԵՏՀ հրահանգով (12)) նկարագրված մեթոդով:

Քաղցրահամ ջրեր, ափամերձ ջրեր և ծովային ջրեր

Ազոտի խտությունը չափվում է Համայնքում վերգետնյա քաղցրահամ ջրերի որակի մասին տեղեկատվության փոխանակման ընդհանուր ընթացակարգ սահմանող՝ Խորհրդի 1977 թվականի դեկտեմբերի 12-ի 77/795/ԵՏՀ որոշման (13) 4ա (3) հոդվածի համաձայն (փոփոխված՝ 86/574/ԵՏՀ որոշմամբ (14)):

ՀԱՎԵԼՎԱԾ V

10 –ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. 4—րդ հոդվածի համաձայն ձեռնարկված կանխարգելիչ գործողությունների մասին հայտարարություն:

2. Հետևյալը նկարագրող սխեման՝

   ա) 3 (1) հոդվածի և I հավելվածի համաձայն սահմանված ջրեր՝ յուրաքանչյուր ջրի համար նշելով, թե I հավելվածի չափանիշներից որն է օգտագործվել՝ սահմանումը կատարելու համար.

   բ) սահմանված խոցելի գոտու տեղանքը՝ առանձնացնելով գոյություն ունեցող գոտիները նախկին հաշվետվությունից ի վեր սահմանված գոտիներից:

3. 6-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված դիտանցման արդյունքների ամփոփագիրը, որը հայտարարություն է ներառում այն դիտարկումների մասին, որոնք հանգեցրել են յուրաքանչյուր խոցելի գոտու սահմանմանը և խոցելի գոտիների սահմանումների փոփոխություններին կամ լրացումներին:

4. 5-րդ հոդվածի համաձայն կազմված գործողությունների ծրագրերի ամփոփագիրը, մասնավորապես՝

   ա) 5 (4) (ա) և (բ) հոդվածով պահանջվող միջոցները.

   բ) III (4) հավելվածում պահանջվող տեղեկությունները.

   գ) 5(5) հոդվածի համաձայն ձեռնարկված ցանկացած լրացուցիչ միջոց կամ ավելի ինտենսիվ գործողություններ.

   դ) 5(6) հոդվածի համաձայն իրականացված դիտանցման ծրագրերի արդյունքների ամփոփագիր.

   ե) անդամ պետությունների ենթադրություններն այն մասին, թե որքան ժամանակ կպահանջվի, որ գործողությունների ծրագրով սահմանված միջոցը կազդի 3(1) հոդվածի համաձայն սահմանված ջրերի վրա: Տրվում են նաև նշումներ՝ այդ

ենթադրությունների անորոշության մակարդակի մասին:

---

(1) ՊՏ թիվ C 54, 03.03.1989թ., էջ 4 և ՊՏ թիվ C 51, 02.03.1990թ., էջ 12:

(2) ՊՏ թիվ C 158, 26.06.1989 թ., էջ 487:

(3) ՊՏ թիվ C 159, 26.06.1989 թ., էջ 1:

(4) ՊՏ թիվ L 194, 25.07.1975 թ., էջ 26:

(5) ՊՏ թիվ L 271, 29.10.1979 թ., էջ 44:

(6) ՊՏ թիվ L 229, 30.08.1980 թ., էջ 11:

(7) ՊՏ թիվ C 328, 07.12.1987 թ., էջ 1:

(8) ՊՏ թիվ C 209, 09.08.1988 թ., էջ 3:

(9) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28–ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999 թ., էջ 23):

(10) Սույն Հրահանգը ծանուցվել է անդամ պետություններին 1991 թվականի դեկտեմբերի 19-ին:

(11) ՊՏ թիվ L 213, 22.08.1977թ., էջ 1:

(12) ՊՏ թիվ L 265, 12.09.1989թ., էջ 30:

(13) ՊՏ թիվ L 334, 24.12.1977թ., էջ 29:

(14) ՊՏ թիվ L 335, 28.11.1986թ., էջ 44: